

Early Start Ուղորդման Ուղեցույցը

3-12 ամսական և 1-3 տարեկան երեխաների հաշմանդամության, զարգացման հապաղման առկայության կամ խնդիրների առաջացման հավանականության դեպքում նրանց և նրանց ընտանիքներին հատկացվող աջակցման ծառայության համապետական միջգերատեսչական կարգի համակարգումն է: **COVID-19-ի ժամանակ Տարածաշրջանային կենտրոնները բաց են և ընդունում են Early Start (Վաղ մեկնարկի) համար դիմումներ:** Եթե 3-12 ամսական կամ 1-3 տարեկան երեխայի մոտ նկատում եք զարգացման հապաղում կամ զարգացման տարբերվող ընթացք, ապա.




Ստուգեք

Երեխան վաղ աջակցման կարիք կարող է ունենալ, եթե՝

- Նկատվում է զարգացման հապաղում ճանաչողական, հաղորդակցման, սոցիալական, հուզական, հարմարվողականության կամ ֆիզիկական և շարժողականության զարգացման մեկ կամ մի քանի ոլորտներում, ներառյալ տեսողությունը կամ լսողությունը:
- Ունի զարգացման պատմությունից հայտնի հաստատված ռիսկային գործոն, ինչը զարգացման հապաղման համար բարձր հավանականություն է ստեղծում, կամ
- Բարձր ռիսկային է համարվում հիմնական զարգացման անկարողությունը կապված առկա կենսաբանական ռիսկային գործոնների հետ, որը հաստատված է բարձր որակավորում ունեցող մասնագետների կողմից:

Ուղորդեք

- 3-12 ամսական երեխաների և 1-3 տարեկան երեխաների մոտ վաղ միջամտության կարիք հայտաբերելիս երկու (2) աշխատանքային օրվա ընթացքում կապվեք ձեր տեղական տարածքային կենտրոնի հետ, որպեսզի ստանաք «Early Start» ծառայությունների ուղեգիր: Տեսեք ստորև կամ այցելեք <https://www.dds.ca.gov/rc/lookup-rcs-by-county>:



ՍԿԱՆԱՐԵՔ ԻՆՁ


- 45 օրվա ընթացքում տարածքային կենտրոնը կամ տեղական կրթական գործակալությունը պետք է՝
 - Նշանակի ծառայության համակարգող
 - Ստանա ծնողների համաձայնությունը
 - Կազմի ժամանակացույց և ամբողջական գնահատում կատարի
 - Մշակի անհատականացված ընտանեկան ծառայության պլան (IFSP)՝ ուժեղ կողմերն ու ծառայությունները զարգացնելու համար
 - Տրամադրի ծառայություններ տանը կամ համայնքում
- Ուղորդվի երեխայի ապահովագրությամբ՝ գնահատման գործընթացը հեշտացնելու համար**:

Տեղական տարածքային կենտրոն՝

Եղեք մասնակից

Համագործակցեք ընտանիքի և «Վաղ մեկնարկի» գործընկերների հետ՝ IFSP-ի մշակման համար՝

- Մասնակցեք IFSP ժողովներին,
- Գնահատող թիմի համար տեղեկատվության տրամադրում և ներդրման կատարում, և
- Ընտանիքին ուղորդեք «Early Start» ծրագրի Ընտանեկան ռեսուրսների տեղամասային կենտրոն (Early Start Family Resource Center)՝ լրացուցիչ աջակցության համար: Տեսեք ստորև կամ այցելեք <https://frcnca.org/get-connected>:



ՍԿԱՆԱՐԵՔ ԻՆՁ

Ընտանեկան ռեսուրս տեղական կենտրոն՝

Տես արդյունքները

Հետազոտությունը*** փաստում է, որ.

- Այն երեխաները, ովքեր մասնակցում են բարձրորակ վաղ միջամտության ծրագրերին, հակված են ունենալ
 - Մանկապարտեզի տարիքում հատուկ կրթության և այլ մասնագիտացված ծառայությունների ավելի քիչ կարիք,
 - Սոցիալական հարաբերություններում սպասվածից ավելի աճ, գիտելիքների և հմտությունների օգտագործում և ինքնասպասարկման հմտություններ, և
 - Հաղորդակցման խանգարումների զարգացման ավելի քիչ վտանգ:
- Այն ծնողները, ովքեր մասնակցում են բարձրորակ վաղ միջամտության ծրագրերին, հայտնում են, որ իրենց իրազեկված և վստահ են զգում, նրանք կարողանում են՝
 - Հոգ տանել իրենց երեխաների մասին և օգնել նրանց սովորել և զարգանալ,
 - Շփվել մասնագետների հետ, և
 - Իրենց երեխաների իրավունքները պաշտպանել:

«Early Start» ծրագրի ուղորդման հետ կապված հարցերի և/կամ առավել մանրամասն տեղեկատվության համար խնդրում ենք կապվել «Early Start» BabyLine 1-800-515-BABY (2229) հեռախոսահամարով կամ EarlyStart@dds.ca.gov հասցեով:

* 17 CCR 52040(e)(4)

**Օրենքը պարտադրում է, որ նախնական գնահատումը ընտանիքի համար առանց ծախսերի լինի: Ապահովագրությունը կարող է փոխհատուցել որոշ երեխաների ծախսերը:

***Goode, Diefendorf & Colgan (2011 թ.): Վերցված է <https://ectacenter.org/~pdfs/pubs/outcomesofearlyintervention.pdf>:

ԴԻՄԵԼՈՒ ՊԱՏՃԱՌԸ

Ճեր խնամքի տակ գտնվող երեխայի համար լրացուցիչ օգնության նպատակով



Երեխաները զարգանում են տարբեր տեմպերով և տարբեր ձևերով: Զարգացման տարբերությունները կարող են կապված լինել անհատականության, խառնվածքի և/կամ փորձառության հետ: Որոշ երեխաներ կարող են նաև ունենալ առողջական խնդիրներ, որոնք ազդում են նրանց զարգացման վրա:

Երեխայի կյանքի առաջին տարիները շատ կարևոր են նրա համար: Որքան շուտ բացահայտվի մտահոգությունը, այնքան ավելի շուտ երեխան և ընտանիքը կարող են ստանալ մասնագիտացված ծառայություններ, որոնք կաջակցեն երեխայի աճին և զարգացմանը: Օգտագործեք այս ռեսուրսը՝ երեխայի զարգացման վերաբերյալ ձեր ցանկացած հարց կամ մտահոգություն քննարկելու համար:

Ռիսկային գործոններ

Հետևյալ գործոնները կարող են երեխաների առողջության և զարգացման հարցում ավելի մեծ վտանգ առաջացնել.

- Վաղաժամ ծնունդը կամ ցածր քաշով ծնվելը
- Տեսողության կամ լսողության դժվարություններ
- Նախածննդյան ազդեցությունը կամ թմրամիջոցների, ալկոհոլի կամ ծխախոտի տեսակների ազդեցությունը
- Վատ սնուցում կամ սննդի հետ կապված դժվարություններ (սննդարար մթերքների, վիտամինների, սպիտակուցների կամ երկաթի պակասը սննդակարգում)
- Կապարի հիմքով ներկերի ազդեցություն (լիզել, ուտել կամ ծծել կապարի հիմքով ներկված դռները, հատակը, կահույքը, խաղալիքները և այլն):
- Բնապահպանական գործոններ, ինչպիսիք են չարաշահումը կամ անտեսումը

Վարքագծեր և հարաբերություններ

Հետևյալ վարքագծերից մի քանիսը կարող են անհանգստության պատճառ հանդիսանալ ցանկացած երեխայի դեպքում՝ անկախ տարիքից.

- Խուսափում է բռնվելուց, չի սիրում, երբ իրեն դիպչում են

- Դիմադրում է հանգստանալուն, չի կարողանում հարմարվել
- Խուսափում է կամ հազվադեպ է նայում ուրիշների աչքերի մեջ
- Չորս ամսականում չի գոգոլում և չի ժպտում ուրիշների հետ շփվելիս
- Մեկ տարեկանում նա չի խաղում այնպիսի խաղեր, ինչպիսիք են՝ ծիկ անելը, ծափիկ-ծափիկ անելը կամ ձեռքով ցտեսություն անելը
- Երկու տարեկանում չի ընդօրինակում ծնողին կամ խնամակալին առօրյա գործերում ինչպիսիք են սպասքը լվանալը, ճաշ եփելը կամ ատամները խոզանակելը
- Երեք տարեկանում չի խաղում ուրիշների հետ
- Պարբերաբար ագրեսիվ վարք է դրսևորում, վնասում է իրեն կամ ուրիշներին

Լսողություն

- Հաճախակի ունենում է ականջի ցավեր
- Ունեցել է բազմաթիվ ականջի, քթի կամ կոկորդի վարակներ
- Չի նայում, թե որտեղից են հնչում հնչյունները կամ ձայները և չի արձագանքում բարձր ձայներին
- Խոսում է շատ բարձր կամ շատ ցածր ձայնով, կամ ունի անսովոր ձայն
- Միշտ չէ, որ արձագանքում է, երբ կանչում են իրեն սենյակի մյուս կողմից, նույնիսկ երբ երեխային առաջարկվում է



- այնպիսի մի բան, որի հանդեպ նա միշտ հետաքրքրասիրություն է հանդես բերել կամ հավանում է
- Մարմինն այնպես է շրջում, որ միևնույն ականջը միշտ թեքված է ձայնի ուղղությամբ

Տեսողություն

- Ունի կարմրած, ջրալի աչքեր կամ կեղևապատ կոպեր
- Հաճախակի է տրորում աչքերը
- Նայելիս փակում է մեկ աչքը կամ գլուխը թեքում է օբյեկտի վրա
- Դժվարանում է նայելով հետևել առարկաներին կամ մարդկանց, երբ խոսում են նրա հետ
- Դժվարանում է կենտրոնանալ կամ աչքերի մեջ նայել
- Սովորաբար գրքերը կամ առարկաները պահում է դեմքին շատ մոտ կամ նստում է հեռուստացույցին շատ մոտ
- Աչքերը կամ մեկ աչքը նայող(ներ)ին խաչված կամ շրջված է թվում, կամ աչքերը միասին համահունչ չեն շարժվում

Շարժունակություն

- Ունի կաշկանդված ձեռքեր կամ ոտքեր
- Հեռանում է կամ ետ է նետվում, երբ նրան մոտ են պահում կամ փաթաթվում են
- Չորս ամսական հասակում գլուխը վեր չի պահում
- Վեց ամսականում չի գլորվում
- Ինն ամսականում չի նստում
- Մեկ տարեկանում չի սողում ձեռքերով և ծնկներով, չի վերցնում մանր առարկաները մատով և բթամատով
- Տասնութ ամսականում չի քայլում առանց օգնության
- Երկու տարեկանում դժվարանում է պահել մեծ գունավոր մատիտներ և խզրզել

- Երկուսուկես տարեկանում դժվարանում է գրքի էջերը թերթել
- Երեք տարեկանում ունի վատ կոորդինացիա և վազելիս շատ է ընկնում կամ սայթաքում

Հաղորդակցություն

- Չորս ամսականում չի գոգոլում և չի ժպտում
- Ինն ամսականում ուշադրություն գրավելու համար չի թոթովում
- Մեկ տարեկանում տարբեր կերպ չի արձագանքում այնպիսի բառերին, ինչպիսիք են «բարի գիշեր» կամ «գնդակ»
- Տասնհինգ ամսականում չի ասում մարդկանց կամ առարկաների անուններ, օրինակ՝ «մամա» կամ «շիշ», կամ գլուխը չի թափահարում որպես «ոչ»-ի նշան
- Տասնութ ամսականում չի հետևում մեկ քայլանոց ցուցումներին
- Երկու տարեկանում չի մատնանշում կամ անվանում առարկաներ կամ մարդկանց իր ցանկությունները կամ կարիքներն արտահայտելու համար
- Երկու տարեկանում չի օգտագործում երկբառային արտահայտություններ, ինչպիսիք են «հյութ եմ ուզում» կամ «մամա գնա»
- Երեք տարեկանում չի փորձում ասել ծանոթ ոտանավորներ կամ երգեր

Մտածողություն

- Մեկ տարեկանում դժվարանում է գտնել ինչ-որ առարկա, որը ցույց տալուց հետո թաքցրել են
- Երկու տարեկանում չի մատնանշում մարմնի մասերը, երբ տալիս են այնպիսի հարցեր, ինչպիսիք են «Որտեղ է քո քիթը:»
- Երկուսուկես տարեկանում չի խաղում երևակայական խաղեր և չի հետևում երկու քայլանոց ցուցումներին
- Երեք տարեկանում չի հասկանում այնպիսի գաղափարներ, ինչպիսիք են «ավելին» կամ «մեկը»